Հավելված N 2
ՀՀ կառավարության 2012 թվականի
մարտի 7-ի N 281 - Ն որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

NN ը/կ	Ակնկալվող արդյունքը (նպատակը)	Միջոցառման անվանումը	Պատասխանատուն	Համակատարողները	Ժամկետները	Ֆինանսավորման աղբյուրը
1	2	3	4	5	6	7
1.	Աղետների ռիսկերի նվազեցման, ինստիտուցիոնալ կարողությունների զարգացման, օրենսդրական միասնական դաշտի ապահովման, աղետների ռիսկերի բոլոր դերակատարների գործառույթների հստակ սահմանման, աղետների ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված գործողությունների իրականացման քաղաքականության առկայություն	բնակչության պաշտպանության ապահովման հայեցակարգի մշակում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Միավորված ազգերի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակ, «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ (համաձայնությամբ)	2012 թ. չորրորդ կիսամյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
2.	Պետական կառավարման հանրապետական, տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների միջև աղետների ռիսկերի նվազեցման ոլորտում հստակ սահմանազատված լիազորություններ, միջազգային նորմերի պահանջներին դրանց ներդաշնակեցված գործառույթներ և պարտականություններ՝ բացառված անհարկի կրկնություններ ու հակասություններ	«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և ոլորտը կարգավորող այլ օրենքներում փոփոխություններ ու լրացումներ կատարելու մասին նախագծերի մշակում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	«Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ (համաձայնությամբ)	սույն ծրագրի 1-ին կետի միջոցառման կատարումից հետո 6 ամսվա ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

1	2	3	4	5	6	7
3.	Աղետների ռիսկերի նվազեցման ռազմավարության մեջ ինտեգրված կրթական համակարգի առկայություն, երկրի զարգացման, այդ թվում՝ նաև առանձին ոլորտների զարգացման ծրագրերում աղետների ռիսկերի գիտելիքի ձևավորված և զարգացած կարողություն, բնակչության մեջ անվտանգության և աղետների դիմակայման ձևավորված մշակույթ, աղետակայուն հասարակության ձևավորման հիմքերի ներդրում	աղետների ռիսկերի նվազեցման կրթության ներդրման համար կրթական համակարգի բոլոր հաստատություններում ուսուցման գոյություն ունեցող համապատասխան մեթոդների ուսումնասիրություն, կիրառելի լավագույն մեթոդների ընտրություն, նոր մեթոդների մշակում, աղետների ռիսկերի նվազեցման հարցերով ուսուցանողների պատրաստման համար անհրաժեշտ ծրագրերի և ուսուցողական նյութերի մշակում և հրատարակում, ուսուցանողների պատրաստում ու հետագայում նրանց որակավորման մշտական գործընթացի ապահովում, աղետների ռիսկերի նվազեցման կրթության ենթահամակարգի ստեղծմանն ուղղված իրավական դաշտի մշակում և հետագա զարգացման ապահովում, կրթության համակարգի բոլոր մակարդակների հաստատությունների համար աղետների ռիսկերի նվազեցման կրթական ծրագրերի մշակում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, «Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ (համաձայնությամբ), Միավորված ազգերի զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակ (համաձայնությամբ)	2012 թ. ընթացքում	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:
4.	Արտակարգ իրավիճակներում կառավարման ժամանակակից և գործուն մեխանիզմների առկայություն	Ճգնաժամային կառավարման ազգային կենտրոնի գործարկում, մարդկային, գիտելիքի, տեղեկատվական, տեխնիկական, տեխնոլոգիական, նյութական, ֆինանսական և այլ ռեսուրսներ կառավարման նոր մեխանիզմների ու գեոտեղեկատվական ու այլ համակարգերի մշակում և ներդրում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	«Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ (համաձայնությամբ)	2012 թ. երկրորդ կիսամյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

1	2	3	4	5	6	7
5.	Կառավարման մարմինների և բնակչությունն իրազեկվածության ու պատրաստվածության գործուն մեխանիզմների առկայություն	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության լրատվական կենտրոնի անխափան գործունեության, արտակարգ իրավիճակների կառավարման ոլորտում ներգրավվող կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների ու բնակչության կազմակերպությունների իրազեկվածության ու պատրաստվածության ապահովմանը, այդ օղակների լրատվության պատասխանատուների և բնակչության հետ աշխատանքի հմտությունների զարգացմանն ուղղված ծրագրերի մշակում և իրականացում	ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարություն	«Աղետների ռիսկերի նվազեցման ազգային պլատֆորմ» հիմնադրամ (համաձայնությամբ)	2012 թ. երկրորդ կիսամյակ	Լրացուցիչ ֆինանսավորում չի պահանջվում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ